

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ԸՆԲԱԹԱԹԵՐԹԻ

Մեպտեմբեր 2022

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Միքելի աշակերտներ,

Վերամուտ է արդեն: Նոր խանդավառությամբ եւ նոր ուժերով սկսինք մեր տարեշրջանը: Դասընկեր-դասընկերուհիներ ըլլանք սիրով իրարու հետ եւ օգնենք իրարու: Ըլլանք կոկիկ եւ կարգապահ: Յարգենք դպրոցի օրէնքները, յարգենք մանաւանդ մեր ուսուցիչները: Անոնք մեզի լեզու, թուաբանութիւն, գիտութիւն եւ պատմութիւն պիտի դասաւանդեն եւ մեզ պիտի դաստիարակեն, որպէսզի աւելի ուշ, մենք դառնանք լաւ մարդ եւ լաւ հայ:

Յիշենք, թէ յաջողութեան գաղտնիքը դասը դասարանին մէջ լաւ հասկնալուն մէջն է: Ուրեմն դասի պահուն պահենք լռութիւն եւ մեր կարելին ընենք հետեւելու ուսուցիչին բացատրութեան: Իսկ տուն վերադարձին, օրը օրին պատրաստենք մեր դասերը եւ կատարենք մեր պարտականութիւնները: Դասարանին մէջ, մեր միտքը արթուն պահելու եւ մեր յիշողութիւնը գորացնելու համար, շատ կարեւոր է պահել մեր մարմինը առողջ: Իսկ առողջ մնալու համար, պէտք է ամէն օր 8-էն 10 ժամ քնանանք եւ սննդարար ուտելիքներ ուտենք:

Ուշադիր ըլլանք: Համաճարակը տակաւին չէ անհետացած: Յարգենք համաճարակի օրէնքները, որ անհոգութեան պատճառով չհիւանդանանք ու զիրար չվարակենք:

Բարի վերամուտ եւ բարի աշխատանք բոլորին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆ



2 սեպտեմբեր 1991-ին, Արցախի հայութիւնը ոտքի ելաւ եւ ինքզինք անկախ պետութիւն հռչակեց դուրս գալով խորհրդային համակարգէն եւ Ատրպէյճանի լուծէն: Արցախի մեր քոյրերն ու եղբայրները մեծ գոհողութիւններով, բազմաթիւ դժուարութիւններով եւ հերոսաբար պայքարելով յաջողեցան ազատագրել Արցախի ամէն մէկ հողի կտորը:

44-օրեայ պատերազմէն ետք, մենք կորսնցուցինք գեղեցիկ եւ պատմական ու մշակութային արժէքներով հարուստ շրջաններ եւ ունեցանք առիծի պէս քաջ նահատակ հերոսներ: Արցախը այսօր վիրաւոր է, բայց կապրի:

Այսօր Արցախի խորհրդանիշ՝ «Տատիկն ու Պապիկը», իրենց մարմինն ու ոտքերը ամուր պահած են հողին: Եւ կարծես ամէն հայու աչքին նայելով, պատգամ մը կը փոխանցեն. «Ամուր պահեցէք ձեր հայրենի հողը. թշնամիին ձեռքը չձգէք մեզ»: Մենք ալ Տատիկին ու Պապիկին նման, կապուած ըլլանք Արցախեան հողին եւ մեր արմատներուն: Մեր իւրաքանչիւրին պարտքն է տէր կանգնիլ Արցախին եւ օգտակար դառնալ արցախահայութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆ

21 սեպտեմբեր 1991-ին, հայ ժողովուրդը գրեթէ իր ամբողջությամբ «այո» ըսաւ ազատ, անկախ եւ ինքնիշխան պետութիւն մը ունենալու իր երազին եւ հասաւ իր նպատակին: Այսօր, 31 տարիներ ետք, մեր երկիրը մեծ դժուարութիւններու առջեւ է: 44-օրեայ պատերազմէն վերջ, թշնամին քայլ առ քայլ յառաջանալով կը փորձէ առաւել եւս ճնշել մեզ եւ տիրանալ մեր տարածքներուն: Այս վիճակէն դուրս գալու համար, մենք պէտք ունինք կազմակերպուած, բանակի եւ ազգային արժէքներ գնահատող անձերու իշխանութեան գլխին: Եթէ որպէս հայ, հպարտ եւ ուրախ կուզենք ապրիլ, մեր բաժան-բաժան վիճակէն դուրս գանք եւ համախմբուինք: Միայն միասնական ուժերով պիտի գտնենք լուծումներ մեր բոլոր դժուարութիւններուն:



Հայ ժողովուրդը պայքարող եւ ազատութիւնը սիրող ժողովուրդ է: Ան երկար տարիներ անհաւասար իրաւունքներով ապրած է ազերիներու եւ թուրքերու հետ. չարչարուած, կողոպտուած, ջարդուած ու տեղահանուած է, բայց ազատ Հայաստանի երազով ապրած է, մեծ գոհողութիւններ կատարած է եւ միասին քով-քովի եկած, միասնական ուժով յաջողած է արձանագրել մայիս 28-ի յաղթանակները, որուն իբրեւ հետեւանք կրցանք ունենալ սեպտեմբեր 21-ի մեր երկրորդ անկախութիւնը: Գիտնանք անոր յարգը եւ ըլլանք տէրը մեր հայրենիքին:

ԱԻՈՔԱՏՕ




Աւոքաւոն իւղոտ պտուղ մըն է, բայց շատ օգտակար: Ան հարուստ է կենսանիւթերով (vitamins C, E եւ K) եւ հանքայիններով (magnesium եւ potassium), որոնք կը պաշտպանեն սիրտը եւ կը կանխարգիլեն քաղցկեղի (cancer) որոշ տեսակներ: Աւոքաւոն կը նուազեցնէ բորբոքումը: Այլ բարիքներու շարքին ան ունի մարսողական յատկութիւններ եւ օգտակար է մեր աղիքներուն: Ան իր մէջ կը պարունակէ ճարպաթթուներ (acides gras), որ ուտողի ուղեղին մէջ արագ կշտացածի նշաններ կու տան: Աւելցնենք նաեւ, որ աւոքաւոն կը դասուի այն պտուղներու շարքին որոնք օգտակար են յիշողութեան համար:

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

- Բոլոր պզտիկ պտուղները, ինչպէս հապալասը (blueberry), լոռամիրգը (cranberries), մոշը (blackberries), ազնուամորին (raspberries) եւ ելակը:
- Աւոքաւոն:
- Օմեկա 3-ով հարուստ իւղոտ ձուկերը ինչպէս սալմոնը եւ սարտինը:
- Սէւ տուրմը:
- Կանաչեղէնները մասնաւորաբար պրոքթոլին, հազարը, կաղամբը, շոմինը (spinach) եւ այլն:



ՎԵՐԱՍՈՒՏԻՆ ՀԵՏ, ԼԱԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Դպրոցական տարեշրջանը լաւ սկսելու համար, պէտք է որդեգրել լաւ սովորութիւններ:

1- Հեռացնենք մեր քովէն ամէն բան, որ կրնայ խանգարել մեր կեդրոնացումը: Ճիշդ է, որ յաճախ համակարգիչ կամ բջիջային կ'օգտագործենք յաւելեալ տեղեկութիւններ ունենալու համար մեր դասին կապակցութեամբ. բայց փորձենք չտարուիլ անոնցմով: Պէտք եղած տեղեկութիւնները ունենալէ ետք, անջատենք եւ մէկ կողմ դնենք զանոնք: Հեռու ժամանք մանաւանդ ընկերային ցանցերէ:

2-Նախքան մէկ դասէն միւսին անցնիլը, կարճ դադար մը առնենք, ջուր խմելու, խոր շունչ առնելու, հանգչելու:

3- Եռամսեակի կամ կիսամսեակի սկիզբին ճշդէնք իրագործելի նպատակներ եւ մեր կարելին ընենք, որ անոնք իրականանան: Օրինակ՝ որոշենք կարդալ գիրք մը ամէն ամիս կամ որոշենք որոշ նիշ ապահովել որոշ նիւթի մը մէջ, եւ այլն:

ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ. ԻՆՏԻ ՆՄԱՆ ՀԱՅ ԷՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ



Բուն անունով Գարեգին Տեր-Յարութինեան, ծնած է Նախիջեւան 1 յունուար 1886-ին: Խանդավառուած հայ ազատագրական շարժումով, կը միանայ հայկական յեղափոխութեան: Իրաւաբանութիւն ուսանելու համար կ'երթայ Ս. Փեթերսպուրկի համալսարանը: 1907-ին, մեծ յաջողութեամբ կ'աւարտէ Պուլկարիոյ զինուորական վարժարանը: 1912-ին, 300 հայ զինուորներով կը մասնակցի Պալքանեան պատերազմին:

1914-ին, կը նշանակուի կամաւորական Բ. Գունդի փոխ-հրամանատար եւ կ'աշխատակցի զօրավար Դրոյին հետ:

1918 մայիսին, Նժդէի իր մասնակցութիւնը կը բերէ Ղարաքիլիսէի ճակատամարտին:

1919-ին, կ'անցնի Զանգեզուր եւ իր բացառիկ կարողութիւններով կը ղեկավարէ Զանգեզուրի ճակատամարտը:

Հայաստանի խորհրդայնացումէն եւ փետրուարեան ապստամբութենէն ետք, մինչեւ 1921-ի ամառը, Նժդէի ղեմ կը ղնէ համայնավար յարձակումներուն եւ կը դառնայ ինքնավար Սիւնիքի միակ ղեկավարը: Ապա Սիւնիքէն կ'անցնի Պարսկաստան, յետոյ Պուլկարիա:

1944-ին, երբ ռուսական կարմիր բանակը կը գրաւէ Ռումանիան, Նժդէի ներկայութիւնը Պուլկարիոյ մէջ կը դառնայ վտանգաւոր: Ան իր ընկերներուն կեանքը խնայելու համար, կը յանձնուի պուլկար համայնավարներուն, որոնք կարճ ժամանակի մը համար կը բանտարկեն զինք Սոֆիայի մէջ, ուրկէ կը փոխադրուի Մոսկուա, յետոյ Երեւան եւ վերջապէս Սիպերիա: Կ'ըսուի թէ չդիմանալով ցուրտին եւ բանտի անմարդկային պայմաններուն կը մահանայ 1955-ին:

Գարեգին Նժդէի հեղինակ է բազմաթիւ գրքոյկներու: Նժդէիէն խօսքեր.

«Մի՛րէ՛ գիրքը: Չկայ աւելի անպիտան արարած քան անգրասէրը: Չկայ աւելի տխուր եւ անսուրբ վայր, քան տունը առանց գիրքերու»:

«Կուզե՛ս վերջ տալ տառապանքներուդ (...) Կուզե՛ս փրկուիլ՝ եղիր ուժեղ, որովհետեւ աշխարհի մէջ, թոյլերը բարեկամ չունին: Իսկ ուժիդ ապացոյցը տալու համար, ցոյց տուր երկու բան. առաջինը, որ գիտես մեռնիլ գիտակցօրէն, իմաստալի մահով. երկրորդ, որ գիտես մեռնել ու պաշտպանել ինքզինքդ»:

Միւնեաց սարեր

Խօսք եւ երաժշտութիւն՝ Գուսան Աշոտ

Հազար ու մի երգում գովում սար եմ տեսել, Բայց միշտ ձեր կարօտը քաշել, Միւնեաց սարեր, Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել, Ծաղիկներիդ գոյն-գոյն նախշել, Միւնեաց սարեր, Ինձ մօր սրտով ձեր գիրկն առէք, Միւնեաց սարեր:

Եայլաներիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մէջ երագ դառած:

Ծաղկիդ բոյրը հազար դաշտ ու ձոր կը լցնի, Հազար ցամաք հողի, քարի շուրթ կը բացի, Տուն կը բերէք ձեր պանդուխտին, չէք կորցնի, Հովերդ ինձ ձեռքով կ'անեն Միւնեաց սարեր, Ինձ մօր սրտով ձեր գիրկն առէք Միւնեաց սարեր:


Եայլաներիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մէջ երագ դառած:

Մարդուն քաջի ուժ կը տայ ձեր օդն ու ջուրը, Մուրբ մօր նման օրօր կ'ասի գով գեփիւրը, Աշխարհով մէկ տարածուել է ձեր անունը, Ձեզ հազարան խաղ եմ կանչել, Միւնեաց սարեր, Ինձ մօր նման ձեր գիրկն առէք Միւնեաց սարեր:

Եայլաներիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մէջ երագ դառած:

Գուսան Աշոտ, Միւնեաց հողը անարմատ է, Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է, Մարդն արծիւ է, լեռնածին է, հրահատ է, Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Միւնեաց սարեր, Ինձ մօր նման ձեր գիրկն առէք Միւնեաց սարեր:

Եայլաներիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մէջ երագ դառած:



ՄԻՒՆԻՔԸ

Միւնիքի մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան հարաւային սահմանին վրայ: Անոր կեդրոնն է Կապան քաղաքը, որ կը գտնուի Երեւանէն 316 քլմ. հեռավորութեան վրայ: Մարզի սահմաններէն ներս կը գտնուին նաեւ Ագարակ, Գորիս, Մեղրի, Միսեան եւ Քաջարան քաղաքները:

Միւնիքի մէջ յայտնաբերուած են Արտաշէս Ա. Թագաւորի օրերէն արձանագրութիւններ:

Պատմականօրէն Միւնիքը մէկն է Մեծ Հայքի 15 նահանգներէն: Միսական աշխարհը հռչակաւոր եղած է իր շատ բարձր ամրոցներով ու հազարամեայ վանքերով: Այստեղ կը գտնուէր 13-րդ դարուն ստեղծուած Հայաստանի ամէնէն հին համալսարանը՝ Գլաձորը:

Միջնադարեան Միւնիքը շատ աւելի մեծ տարածք կը գրաւէր, քան՝ հիմա: Այն ժամանակ Միւնիքի հայ իշխանները կ'իշխէին ամբողջ այդ տարածքին վրայ, որուն մէջ կ'իյնար Վայոց Ձորը, Գեղարքունիքը, Նախիջեւանի մեծ մասը եւ Արցախի մէկ մասը:

10-12-րդ դարերուն, Միւնիքը թագաւորութիւն էր, ուր կ'իշխէր Միսական տոհմը: Յետոյ այդ տոհմին յաջորդէց Օրբելեան տոհմը:

1918-1920 թուականներուն Նախիջեւանի եւ Արցախի նման Միւնիքը եւս դարձած էր Հայստանի եւ Ատրպէյճանի հանրապետութիւններու միջեւ վիճելի տարածք: 1920-ի Դեկտեմբեր 2-ին Թուրքիան, որ այդ ժամանակ գրաւած էր Հայաստանի Հանրապետութեան մեծ մասը, ստիպեց հայկական կառավարութեան ստորագրել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով Հայաստանը Ատրպէյճանին կը յանձնէր Միւնիքը: Սակայն Միւնիքի հայ բնակչութիւնը չընդունեց այս համաձայնագիրը եւ զինուած պայքարի ելաւ՝ Գարեգին Նժդէի հրամանատարութեամբ:

Միւնիքը անկախ փսաց նոյնիսկ այն ժամանակ, երբ պոլշեիկները ամբողջութեամբ գրաւած էին Հայաստանի Հանրապետութեան փսացած մասը: Կարմիր բանակը միայն կատաղի կռիւներ եւ բազմաթիւ զոհեր տալէ ետք, կարողացաւ 1921-ին գրաւել Միւնիքը:

Միւնիքի աշակերտներ, պիտի ուզէի՞ք, որ ձեր քաջերուն երկիրը այսօր յանձնուի թուրքին կամ ազերիին: Պայմանագիրներ կը ստորագրուին, բայց երբ ժողովուրդը իր ամբողջ ուժերով ղեմ ղնէ ստորագրուած պայմանագրին եւ կը պայքարի պաշտպանելու համար իր պապերուն հողն ու ջուրը, այդ պայմանագիրը կը փսայ որպէս պարզ ու անարժէք թուղթ: Ըլլանք տէրը մեր հայրենիքին:




ՏԱՐՕՆ ԵՎ ՏԱԹԵԻԻԿ «ԱՂԱԻՆՈՅ ՎԱՆՔ» գրքոյկը

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել թէ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի հրամանով եւ Ազգային Առաջնորդանի Հայեցի Դաստիարակութեան հրատարակութեամբ լոյս տեսած է ՏԱՐՕՆ ԵՎ ՏԱԹԵԻԻԿ «Աղաւնոյ վանք» մանկապատանեկան գրքոյկը: Ներշնչուած Յովհաննէս Թումանեանի «Աղաւնոյ վանք» բանաստեղծութենէն, Վահագն Գարագաշեան յղացած է պատմութիւնը եւ նկարազարդման աշխատանքները կատարած է Միլվա Խաչերեան:

Գիրքի երրորդ կողքին վրայ կայ գիրքի բովանդակութեամբ եւ նկարազարդումով պատրաստուած շարժապատկեր մը, ուր Տարթեիկին ձայնը կը մարմնաւորէ Արագ Չարեանը իսկ Տարօնին ձայնը՝ Ռուբէն Գարայեանը: Այս շարժապատկերի մեկենասն է «Մանուկ Չուխաճեան» ընտանեկան հիմնադրամը:

Հետաքրքրուի՛ք եւ մեր տուններէն ներս ունենանք անպայման այս գրքոյկն ու իր խտասալիկը:



ԲԼՈՒԹՈՆ

2006-ի օգոստոսին ի վեր Բլութոնը (Pluton) մոլորակ չէ: Բլութոնը 76 տարի համարուած է որպէս մոլորակ: Մակայն երբ միջազգային աստղագիտական միութիւնը նոր սահմանում մը տուած է մոլորակ բառին, քուէարկութիւն եղած է եւ անոր իբրեւ արդիւնք Բլութոնը նկատուած է որպէս «գաճաճ մոլորակ»: Գաճաճ կը նշանակէ թզուկ կամ կարճահասակ:

Կարգ մը տեղեկութիւններ Բլութոնի մասին.

- 1- Բաղդատած միւս մոլորակներուն, ան շատ անելի փոքր է:
- 2- Արեւի լոյսը կը հասնի անոր մօտաւորապէս 5 ժամ ետք: Մինչ նոյն այդ լոյսը կը հասնի Երկիր մոլորակի վրայ, մօտաւորապէս 8 վայրկեանէն:
- 3- Ան Արեւէն շատ հեռու ըլլալուն պատճառով, Արեւին շուրջ իր պտոյտի ընթացքը շատ երկար է եւ կը տեւէ 284 տարի: Մինչ Երկիր մոլորակի պարագային, նոյն այդ պտոյտը, բոլորս ալ գիտենք, որ կը տեւէ 1 տարի:

- 4- Բլութոնի վրայ Արեւը կը ծագի արեւմուտքէն եւ մայր կը մտնէ արեւելքէն, որովհետեւ ան իր պտոյտը կը կատարէ Արեւին շուրջ Երկիր մոլորակի հակառակ ուղղութեամբ:
- 5- Բլութոնի վրայ Արեւը կը ծագի եւ մայր կը մտնէ շաբաթը մէկ անգամ:
- 6- Բլութոնի վրայ կարելի չէ ապրիլ: Հոն մթնոլորտը թունաւոր է մարդու համար:
- 7- Բլութոնի մէկ երրորդը (1/3) ջուր է: Այս ջուրը սառոյցի տեսքով է եւ 3 անգամ անելի շատ է քան Երկիր մոլորակի բոլոր ովկիանոսները միասին դրած: Բլութոնի փսացած երկու երրորդը (2/3) ժայռ է:

Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ

1- Ե՞րբ տեղի ունեցաւ Արցախի անկախութիւնը:

- ա) 1915 ապրիլ 24-ին:
- բ) 1918 մայիս 28-ին:
- գ) 1991 սեպտեմբեր 2-ին:

2- Ե՞րբ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան երկրորդ անկախութիւնը:

- ա) 1991 սեպտեմբեր 2-ին:
- ա) 1991 սեպտեմբեր 21-ին:
- գ) 1918 մայիս 28-ին:

3- Հայաստան իր այսօրուան տկար վիճակէն դուրս գալու համար, ...

- ա) պէտք ունի կազմակերպուած բանակի եւ ազգային արժէքներ գնահատող անձերու՝ իշխանութեան գլխին:
- բ) պէտք է համաձայնի թուրքերուն հետ եւ մոռնայ ցեղասպանութիւնը:
- գ) պէտք է համաձայնի ազերիներուն հետ եւ մոռնայ Արցախը:

4- Յիշողութեան օգտակար ուտելիքներ են աւոքատօն եւ բոլոր պզտիկ պտուղները, ինչպէս հապալասը եւ լոռամիրգը:

- ա) Ճիշդ:
- բ) Միսալ:

5- 1918 մայիսին, Նժդեհ ռ՞ր ճակատամարտին իր մասնակցութիւնը կը բերէ :

- ա) Սարդարապատի:
- բ) Բաշ Ապարանի:
- գ) Ղարաքիլիսէի:

6- Ո՞վ մինչեւ 1921-ի ամառը, դէմ կը դնէ համայնավար յարձակումներուն եւ կը դառնայ ինքնավար Միւնիքի միակ ղեկավարը:

- ա) Գարեգին Նժդեհ:
- բ) Զօրավար Անդրանիկ:
- գ) Սերոբ Աղբիւր:

7- Ո՞ր մարզը կը գտնուի Հայաստանի հանրապետութեան հարաւային սահմանին վրայ:

- ա) Շիրակի:
- բ) Գեղարքունիքի:
- գ) Միւնիքի:

8- Ո՞վ գրած է «Միւնեաց սարեր» այսինքն՝ «Միւնիքի սարեր» երգը:

- ա) Աշուղ Զիւանին:
- բ) Գուսան Աշոտը:
- գ) Սայաթ Նովան:

9- Մեր բանաստեղծներէն ո՞վ գրած է «Աղաւնոյ վանք» բանաստեղծութիւնը:

- ա) Յովհաննէս Թումանեանը:
- բ) Պարոյր Սեւակը:
- գ) Գեորգ Էմինը:

10- Բլութոնը ի՞նչ է:

- ա) Մոլորակ է:
- բ) Գաճաճ մոլորակ է:
- գ) Աստղ է:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագիր՝ Անահիտ Պալեան
Զեայղացք՝ Լորի Խաչերեան